



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» ապրիլի 2026թ.

N 24-Լ

Ե Ր Ե Վ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ռազմաբժշկական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1749-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու պահից:

3. Սույն հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ամբողջ անձնակազմին:

**ՀՀ ազգային անվտանգության
ծառայության տնօրեն**

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
 ՀՀ ԱԱԾ տնօրենի
 2026թ. ապրիլի 22-ի
 N 24-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) ռազմաբժշկական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ԱԱԾ տնօրենի կողմից ստեղծված մարմին է, որն օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է ազգային անվտանգության մարմիններում ծառայության ընդունվող անձանց (այսուհետ՝ Թեկնածու) և ազգային անվտանգության մարմինների ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) առողջական վիճակի հետազոտություն, ռազմաբժշկական փորձաքննություն, բժշկական հսկողություն և հաշվառում:

2. Հանձնաժողովը, սույն կարգին համապատասխան, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կադրային ստորաբաժանման կողմից տրված ուղեգրերի հիման վրա իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության զինծառայողների, զինվորական ծառայության ընդունվող թեկնածուների ռազմաբժշկական փորձաքննությանն առնչվող աշխատանքները:

3. Ռազմաբժշկական փորձաքննությունն իրականացվում է Թեկնածուների և Ծառայողների՝ ծառայության համար պիտանիությունը, ինչպես նաև Ծառայողների, ծառայությունից արձակված անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը որոշելու նպատակով:

4. Հանձնաժողովի աշխատանքներն արձանագրվում են, որի համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը:

5. Հանձնաժողովն ունի կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Բժշկական հետազոտություն կամ փորձաքննություն իրականացնող մարմինները, ինչպես նաև Թեկնածուի կամ Ծառայողի առողջական վիճակի վերաբերյալ սույն կարգի համաձայն տեղեկատվություն ունեցող (փաստաթղթեր ստացած) պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով ապահովել Թեկնածուի կամ Ծառայողի

առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման, բուժման կամ փորձաքննության ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

7. Հանձնաժողովը գործում է ԱԱԾ ռազմաբժշկական վարչության (այսուհետ՝ ՌԲՎ) կազմում: Հանձնաժողովը կազմված է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և անդամներից: Հանձնաժողովի նախագահին ի պաշտոնե ՌԲՎ պետն է:

8. Հանձնաժողովը համալրվում է թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, ակնաբույժ, քիթկոկորդականջաբան, մաշկավեներաբան, վնասվածքաբան, հոգեբույժ, սրտաբան և գինեկոլոգ բժիշկ-մասնագետներով: Հանձնաժողովի անհատական կազմը սահմանում է ՌԲՎ պետը:

3. ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ծառայության համար պիտանիությունը որոշելու նպատակով Թեկնածուների և Ծառայողների, այդ թվում՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների, համապատասխան ուսումնական, այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունվողների, ունկնդիրների և կուրսանտների առողջական վիճակի հետազոտումը և ռազմաբժշկական փորձաքննության իրականացումը,

2) ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում եզրակացությունների տրամադրումը,

3) ծառայության ընթացքում և օրենքով սահմանված կարգով ծառայությունից արձակվելուց հետո՝ ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների, պատճառական կապը ծառայության հետ որոշելու համար ռազմաբժշկական փորձաքննության իրականացումը:

10. Հանձնաժողովի իրավասու է՝

1) Հանձնաժողովի գործառույթներին առնչվող հարցերով ընդունել որոշումներ,

2) տեղեկություններ և բժշկական կամ այլ փաստաթղթեր պահանջել ռազմաբժշկական փորձաքննության ենթարկվողի անձնական գործից, այլ ռազմաբժշկական հանձնաժողովներից, ԱԱԾ կառուցվածքային ստորաբաժանումներից, բժշկական հաստատություններից՝ համակողմանի և լիարժեք փորձաքննության, ինչպես նաև փորձաքննություն իրականացրած մարմինների գործունեության արդյունքների քննարկման, վերլուծության և գնահատման համար,

3) ուսումնասիրել ռազմաբժշկական և քաղաքացիական բժշկական հաստատություններում գտնվող՝ փորձաքննության ենթակա անձանց հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքը, ինչպես նաև փորձաքննության որակը,

4) ծառայության համար պիտանիությունը որոշելու նպատակով իրականացվող փորձաքննությանը հրավիրել Ծառայողի հետագա ծառայության վայրի համար պատասխանատու պաշտոնատար անձանց (անմիջական պետ, բժշկական ծառայության պետ, ԱԱԾ զորամասի բժիշկ), որոնք կապահովեն հետագա ծառայության ընթացքում առողջական վիճակը չվատթարացնող համապատասխան պայմաններ՝ հաշվի առնելով զինծառայողի ունեցած առողջական սահմանափակումները,

5) հետազոտման, բուժման և փորձաքննության նպատակով Ծառայողներին և փորձաքննվողներին ուղեգրել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման 2-րդ հավելվածի V գլխով սահմանված բժշկական հաստատություններ,

6) ռազմաբժշկական փորձաքննության տեսանկյունից բարդ, վիճահարույց դեպքերում, ըստ անհրաժեշտության, Հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել այլ բժշկական հաստատությունների (այդ թվում՝ քաղաքացիական) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ոլորտային խորհրդատուների (առաջատար մասնագետների),

7) առողջական խնդիրներ ունեցող Ծառայողների բժշկական հսկողության նպատակով ներկայացնել խորհրդատվական եզրակացություն Ծառայողի ղեկավարությանը, տալ համապատասխան ցուցումներ ԱԱԾ զորամասերի բժշկական ծառայություններին:

4. ՈԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Հանձնաժողովը ռազմաբժշկական փորձաքննություններն իրականացնում է համապատասխան կադրային ստորաբաժանման կողմից տրված ուղեգրերի հիման վրա:

Ուղեգրում նշվում են ռազմաբժշկական փորձաքննության անցկացման նպատակը, ինչպես նաև փորձաքննության ներկայացված անձի կարգավիճակը (ծառայության ընդունվող, ազգային անվտանգության ծառայության համակարգում այլ ծառայության տեղափոխվող, համապատասխան ուսումնական, ռազմաուսումնական հաստատություն ընդունվող, կուրսանտ, ազգային անվտանգության ծառայությունից արձակվող):

12. Մինչև ռազմաբժշկական փորձաքննության իրականացումը՝ Թեկնածուները (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություն ընդունվող) հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) զինվորական գրքույկ՝ արական սեռի թեկնածուների դեպքում (սահմանված դեպքերում՝ նախազորակոչային, զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ),

2) ամբուլատոր քարտից քաղվածք,

3) տեղեկանքներ՝ տրված առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող կազմակերպություններում առկա հոգեբուժական, նարկոլոգիական, հակատուբերկուլյոզային կաբինետներից կամ տեղեկանքներ՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ավան» հոգեկան առողջության կենտրոն», «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններից:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերից բացի՝ Թեկնածուից (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություն ընդունվող) կարող են պահանջվել նաև այլ տեղեկություններ և հետազոտական տվյալներ՝ հիմք ընդունելով ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելու համար թեկնածուների առողջական վիճակին ներկայացվող պահանջները:

14. Ծառայողները ռազմաբժշկական փորձաքննության ներկայանում են բժշկական գրքույկով, համապատասխան կադրային ստորաբաժանման ուղեգրով, անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական և բժշկական բնութագրերով:

15. Ռազմաբժշկական փորձաքննությունը կատարվում է Հանձնաժողովի բժիշկ-մասնագետների կողմից բժշկական զննում և համապատասխան հետազոտություններ անցկացնելու միջոցով:

16. Ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ իրականացվում են փորձաքննվողի արյան և մեզի ընդհանուր քննություն, էլեկտրասրտագրություն (ԷՍԳ) և մտավոր ունակության հոգեֆիզիոլոգիական հետազոտություն՝ թեստերի միջոցով: Մտավոր ունակության

հոգեֆիզիոլոգիական հետազոտությունը կատարվում է ԱԱԾ կադրային ստորաբաժանման պահանջով՝ ուղեգրի վրա հատուկ նշումով: Ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ իրականացվում է նաև փորձաքննվողի մարմնի զննում՝ մարմնի վրա հնարավոր առկա սպիները, դրանց առաջացման պատճառները, ինչպես նաև դաջվածքները հայտնաբերելու և արձանագրելու համար:

17. Ռազմաբժշկական փորձաքննության ժամանակ կարող են իրականացվել նաև փորձաքննվողի կրծքավանդակի օրգանների ռենտգեն, որովայնի խոռոչի սոնոգրաֆիկ և սրտի էխոսրտագրություն հետազոտությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ հետազոտություններ: Սույն կետով նախատեսված հետազոտությունները Հանձնաժողովի կողմից իրականացնելու անհնարինության դեպքում՝ դրանք իրականացվում են քաղաքացիական բժշկական հաստատություններում, և հետազոտության արդյունքները ներկայացվում են Հանձնաժողովին:

18. Հիվանդություն ձեռք բերած կամ վնասվածք կամ խեղում ստացած Ծառայողները, որպես կանոն, ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության բուժման ավարտից հետո: Ընդ որում, եթե հիվանդության, վնասվածքի կամ խեղման բնույթից ակնհայտ է, որ Ծառայողը ճանաչվելու է ծառայության համար ոչ պիտանի, ապա զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու փորձաքննական եզրակացությունները կարող են կայացվել նաև Ծառայողի բուժման ընթացքում:

19. Փորձաքննվողի առողջական վիճակի բժշկական հսկողության արդյունքների, ծառայողական պարտականությունների կատարման վրա Ծառայողի հիվանդությունների ազդեցության մասին տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև այլ տեղեկություններ հայտնելու նպատակով Հանձնաժողովի նիստերին կարող է հրավիրվել ԱԱԾ զորամասի բժիշկը կամ Ծառայողի անմիջական պետը:

20. Ռազմաբժշկական փորձաքննության ընթացքում փորձաքննվողի ներկայությունը պարտադիր է: Առանձին դեպքերում՝ հիվանդության պատճառով արձակուրդ տրամադրելու վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը կարող է կայացվել փաստաթղթային փորձաքննության հիման վրա՝ առանց փորձաքննվողի ներկայության:

21. Այն Ծառայողների նկատմամբ, ովքեր հիվանդությունը ձեռք են բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել են ծառայողական պարտականությունները կատարելիս՝

ռազմաբժշկական փորձաքննություն կատարվում է միայն բժշկական հիմնարկում բուժման ավարտից հետո:

22. Ռազմաբժշկական փորձաքննության ընթացքում յուրաքանչյուր բժիշկ-մասնագետ զննում է փորձաքննվողին, ուսումնասիրում հիվանդության պատմագիրը, ներկայացված այլ փաստաթղթերը, որից հետո լրացնում է օբյեկտիվ զննության թերթիկի (Ձև N 1) համապատասխան բաժինը՝ կատարելով գրառում ծառայության պիտանիության վերաբերյալ կամ գրանցելով ներկայացված գանգատները, օբյեկտիվ զննությամբ հայտնաբերված խնդիրները, նախնական ախտորոշումը, հետազոտության ուղեգրելու անհրաժեշտության մասին հիմնավորումը, իսկ հետազոտումից հետո՝ նաև տրված ախտորոշումը, ծառայության համար նրա պիտանիության աստիճանը՝ նշում է բժշկական հետազոտման և փորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը: Օբյեկտիվ զննության թերթիկի (Ձև N 1) համապատասխան բաժինն ստորագրում է այն լրացնող բժիշկ-մասնագետը՝ նշելով անունը և ազգանունը:

23. Այն դեպքերում, երբ կլինիկական և լաբորատոր-գործիքային հետազոտությունների տվյալները բավարար չեն փորձաքննվողի՝ ծառայության պիտանիության վերաբերյալ որոշում կայացնելու, ամբուլատոր հետազոտմամբ վերջնական ախտորոշումը կամ ֆունկցիայի խանգարման աստիճանը հստակեցնելու համար, Հանձնաժողովի եզրակացության հիման վրա ՌԲՎ պետը նրան հետազոտման է ուղեգրում բժշկական հաստատություն՝ պարտադիր նշելով նախնական ախտորոշումը: Ուղեգրում նախնական ախտորոշման հետ միաժամանակ կարող է նշվել պարտադիր իրականացման ենթակա հետազոտությունների ծավալը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կոնկրետ հստակեցման ենթակա կասկածվող ախտորոշումը:

24. Սույն կարգով նախատեսված՝ փորձաքննվողների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումն այլ բժշկական հաստատություններում իրականացվում է առաջնահերթ ու անվճար՝ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի համաձայն:

25. Ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով Հանձնաժողովի նախագահի տեղակալի կողմից կազմվում է առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն (Ձև N 2), որը հաստատվում է Հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և Հանձնաժողովի կնիքով:

26. Ռազմաբժշկական փորձաքննության եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում՝ Հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

27. Ազգային անվտանգության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքները համալրող թեկնածուների պիտանիության մասով եզրակացություն չի կայացվում, այլ գնահատվում է առողջական վիճակը և տրվում է առողջության անձնագիր (Ձև N 3):

5. ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՐԾԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

28. Ծառայողներին հիվանդության պատճառով արձակուրդ տրամադրվում է Հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ մինչև 60 օր ժամկետով: Ընդ որում, բուժման մեջ և հիվանդության պատճառով արձակուրդում գտնվելու ժամկետներն առանց ընդհատման չեն կարող գերազանցել 4 ամիսը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին հիվանդությունների բուժման համար օրենսդրությամբ սահմանվում են ավելի երկար ժամկետներ: Եթե սույն կետում նշված չորսամսյա ժամկետը լրանալուց հետո Ծառայողն առողջության վիճակի պատճառով դեռևս չի կարողանում անցնել ծառայողական պարտականությունների կատարմանը և դեռ կարիք ունի բուժման՝ ՌԲՎ պետը տեղեկանք է ներկայացնում ԱԱԾ տնօրենին, որտեղ նշվում են հիվանդությունը ձեռք բերելու կամ վնասվածքը կամ խեղումն ստանալու ժամանակն ու հանգամանքները, այն բժշկական հաստատությունները, որտեղ Ծառայողը բուժվել է, բուժման մեջ գտնվելու օրերի քանակը, բուժման ու հիվանդության հետ կապված արձակուրդի չընդհատվող ժամկետը, իրականացված բուժական միջոցառումները և հաստատված ախտորոշումը, ինչպես նաև եզրակացություն այն մոտավոր ժամկետների մասին, որոնց ընթացքում հնարավոր է ավարտել սկսված բուժումը: Սույն կետով նշված չորսամսյա ժամկետը լրանալուց հետո Ծառայողի՝ հիվանդության պատճառով արձակուրդում գտնվելու ժամկետը երկարացնում է ԱԱԾ տնօրենը՝ ՌԲՎ պետի կողմից ներկայացված տեղեկանքի և բժշկական հիմնարկի կողմից տրված եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներով:

29. Բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետն ավարտվելուց հետո ծառայողը ենթակա է ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտման՝ հետագա ծառայությունը շարունակելու հնարավորությունը որոշելու համար:

6. ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ, ՎՆԱՍՎԱԾՔԻ ԿԱՄ ԽԵՂՄԱՆ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿԱՊԻ ՈՐՈՇՈՒՄԸ

30. Ծառայողների ռազմաբժշկական փորձաքննության բոլոր դեպքերում Հանձնաժողովը որոշում է նաև հիվանդության, այդ թվում՝ հոգեկան հիվանդության (հոգետրավմայի), վնասվածքի կամ խեղման պատճառական կապը ծառայության հետ, որի վերաբերյալ կայացվում է եզրակացություն (Ձև N 4): Ազգային անվտանգության մարմիններում ծառայողի ծառայության ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է կադրային ստորաբաժանման կողմից:

31. Հանձնաժողովի կողմից ծառայության հետ պատճառական կապը որոշելու համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

1) ԱԱԾ զորամասի հրամանատարի կամ անմիջական ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ հիվանդությունը ձեռք բերելու կամ վնասվածքը կամ խեղումն ստանալու հանգամանքների մասին,

2) անձը հաստատող փաստաթուղթ (ծառայողական վկայական, նույնականացման քարտ, անձնագիր),

3) ԱԱԾ զորամասի բժշկական ծառայության կամ այլ բժշկական հաստատության կողմից տրված բժշկական փաստաթղթեր,

4) քրեական վարույթի (գործի) ավարտի վերաբերյալ որոշման կամ ծառայողական քննության եզրակացության պատճենը:

32. Հիվանդության, վնասվածքի կամ խեղման՝ ծառայության հետ պատճառական կապը որոշելիս հիմք է ընդունվում փորձաքննվողի ստորաբաժանման ղեկավարի տեղեկանքը՝ դեպքի հանգամանքների վերաբերյալ, իսկ դեպքի առթիվ քրեական վարույթ նախաձեռնված լինելու կամ ծառայողական քննություն իրականացվելու դեպքում՝ վարույթի կամ ծառայողական քննության շրջանակներում պարզված հանգամանքները: Ընդ որում, եթե օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է, որ ծառայողը՝

1) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել է իր կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, ապա անկախ դեպքի հանգամանքներից՝ Հանձնաժողովի կողմից պատճառական կապ է տրվում միայն ծառայության ընթացքի հետ,

2) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել է ծառայությունից խուսափելու նպատակով կատարած ինքնախեղման կամ ինքնավնասման արդյունքում, ապա Հանձնաժողովի կողմից ծառայության հետ պատճառական կապ չի տրվում,

3) հիվանդությունն ունեցել է մինչև ծառայության ներգրավվելը, ապա Հանձնաժողովի կողմից ծառայության հետ պատճառական կապ չի տրվում,

4) նախկինում ունեցել է հիվանդություն, որը խորացել է (զարգացել է) և հանգեցրել առողջական վիճակի վատթարացմանը, ապա տրվում է պատճառական կապ միայն ծառայության ընթացքի համար:

33. Փորձաքննվողի ստորաբաժանման ղեկավարի կողմից տրվող տեղեկանքի բացակայության դեպքում՝ զինծառայողի ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի կամ խեղման մասին վկաների ցուցմունքները հիմք չեն պատճառական կապը որոշելու համար:

34. Եթե ծառայողի հիվանդության, վնասվածքի կամ խեղման դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ կամ նշանակվել է ծառայողական քննություն, ապա Հանձնաժողովը պատճառական կապի որոշումը, որպես կանոն, կայացնում է դրանց պաշտոնական ավարտից հետո՝ դեպքի հանգամանքների վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա:

35. Եթե փորձաքննվողի մոտ հայտնաբերվել են տարբեր հանգամանքներում ձեռք բերած հիվանդություններ կամ ստացած վնասվածքներ կամ խեղումներ կամ դրանց հետևանքներ, ապա Հանձնաժողովը դրանցից յուրաքանչյուրի պատճառական կապի վերաբերյալ կայացնում է առանձին եզրակացություն՝ պայմանավորված դրանք ստանալու (ձեռք բերելու) հանգամանքներով:

36. Զինվորական ծառայության ժամանակ ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառական կապի մասին փորձաքննական եզրակացությունները քննարկվում և ընդունվում են՝ անկախ ծառայությունից սահմանված կարգով արձակվելու ժամանակահատվածից:

7. ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎՈՂ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

37. Հանձնաժողովը ռազմաբժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա կայացնում է հետևյալ եզրակացությունները՝

1) Թեկնածուի (բացառությամբ ռազմաուսումնական հաստատություն ընդունվողների) և Ծառայողների համար՝

ա. պիտանի է զինվորական ծառայության համար,

բ. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

գ. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

դ. կարիք ունի ծառայողական պարտականություններից ազատման՝ մինչև 15 օր

ժամկետով կամ արձակուրդի՝ հիվանդության պատճառով (վերականգնողական):

2) Ռազմաուսումնական հաստատություն ընդունվողների համար՝

ա. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

բ. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար:

38. Ծառայության համար ոչ պիտանի կամ ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված սպաների, ենթասպաների և շարքային կազմի պայմանագրային զինծառայողների նկատմամբ կարող է անհատապես կայացվել եզրակացություն «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար»՝ հաշվի առնելով ԱԱԾ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կամ ԱԱԾ զորամասի հրամանատարի (պետի) կողմից սույն կարգի համաձայն տրված ծառայողական բնութագիրը և փորձաքննվողի՝ ծառայությունը շարունակելու անձնական ցանկությունը, ինչպես նաև զինծառայողի հիվանդության բնույթը, ծառայության առանձնահատկությունները, աշխատանքային փորձը և փաստացի աշխատունակությունը: Նման եզրակացության դեպքում՝ զինծառայողի համար անհրաժեշտ է ապահովել ծառայության այնպիսի պայմաններ, որոնք, չնայած ծառայողի առողջական սահմանափակումներին, հնարավորություն կընձեռեն վերջինիս շարունակել ծառայությունը: Սույն կետը տարածվում է նաև պահեստազորից զինվորական ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացիների վրա՝ ԱԱԾ տնօրենի համաձայնության առկայության դեպքում:

39. Հանձնաժողովը ծառայության հետ պատճառական կապը որոշելիս տալիս է հետևյալ եզրակացությունները՝

1) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել է ծառայության ընթացքում,

2) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել է ծառայողական պարտականությունները կատարելու հետևանքով,

3) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ,

4) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը կամ խեղումն ստացել է հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով:

40. Հանձնաժողովի եզրակացությունները գրանցվում են եզրակացությունների հաշվառման մատյանում (Ձև N 5) և օբյեկտիվ գննության թերթիկում (Ձև N 1), որոնց կցվում են ներկայացված հետազոտական տվյալները, տեղեկանքները:

41. Փորձաքննվողի վերաբերյալ եզրակացության օրինակը՝ վավերացված Հանձնաժողովի կնիքով, փորձաքննվողի, նրա օրինական ներկայացուցչի կամ նրանց կողմից լիազորված անձի դիմումի հիման վրա, 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է փորձաքննվողին կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրանց կողմից լիազորված անձին, իսկ փորձաքննության արդյունքների վերաբերյալ տեղեկանքը (Ձև N 6) տրամադրվում է փորձաքննության ներկայացրած համապատասխան կադրային ստորաբաժանում:

**ՀՀ ԱԱԾ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՕԲՅԵԿՏԻՎ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻՎ
N _____**

1. Ազգանուն, հայրանուն, անուն _____
2. Ծննդյան օր, ամիս, տարի _____ 3. Կրթություն _____
4. Քաղաքացիական մասնագիտություն, մասնագիտացում, պաշտոն _____
5. Զինված ուժերում ծառայել է _____ -ից մինչև _____
(այո, ոչ)
6. Իրավապահ (ուժային) կառույցներում ծառայել է _____ -ից մինչև _____
(այո, ոչ)
7. Ինչ պատճառով է արձակվել ծառայությունից _____
8. Զինվորական կոչում _____
9. Վերջին 12 ամիսների ընթացքում քանի օր է հիվանդ եղել _____
10. Երբ և որտեղ է բուժվել _____
11. Ճանաչվել է ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող (հաշմանդամ) _____
(այո, ոչ)
որ աստիճանի (խմբի) _____ -ից մինչև _____
ինչ հիվանդությամբ _____
12. Նախկինում անցել է փորձաքննություն _____ որ թվականին _____
(այո, ոչ)
որտեղ _____
13. Համարում եմ ինձ առաջարկվող կամ հետագա ծառայության համար _____
(պիտանի, ոչ պիտանի)
14. Բնակության հասցե և հեռախոսահամար _____

(ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.

1. Թերապևտի հետազոտում

Հասակ _____ սմ Քաշ _____ կգ

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Թերապևտ _____
(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

2. Վիրաբույժի հետազոտում _____

Մարմնի վրա առկա սպիները, դաջվածքները _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Վիրաբույժ _____

(ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.

3. Նյարդաբանի հետազոտում _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Նյարդաբան _____

(ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.

4. Ակնաբույժի հետազոտում

Գունազգացողությունը (ըստ Ռաբկինի) _____

	Աջ աչք	Ձախ աչք
Տեսողության սրությունը կորեկցիայով		
Տեսողության սրությունը առանց կորեկցիայի		

Սկիասկոպիկ ռեֆրակցիա _____

Աջ աչք _____ ձախ աչք _____

Շարժողական ապարատ _____

Արցունքատար ուղի _____

Կոպեր և շաղկապենի _____

Ակնագնդերի դիրք և շարժունակություն _____

Բբեր և դրանց ռեակցիաներ _____

Բեկող միջավայրեր և (աչքի առաջնային և միջին հատվածը) _____

Ակնահատակ՝

Աջ աչք _____ ձախ աչք _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Ակնաբույժ _____

(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

5. Քիթկոկորդականջաբանի հետազոտում _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Քիթկոկորդականջաբան _____
(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

6. Մաշկավեներաբանի հետազոտում _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Մաշկավեներաբան _____
(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

7. Վնասվածքաբանի հետազոտում _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Վնասվածքաբան _____
(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

8. Հոգեբույժի հետազոտում _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Հոգեբույժ _____

(ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.

9. Սրտաբան _____

Ախտորոշում _____

Եզրակացություն պիտանիության վերաբերյալ _____

Սրտաբան _____

(ստորագրություն)

« _____ » _____ 20 թ.

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ _____
(պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը սահմանող Կառավարության որոշման/ԱԱԾ տնօրենի հրամանի անվանումը)

Հատուկ նշում _____

Կ.Տ.

ՌԲՀ նախագահ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ նախագահի տեղակալ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ քարտուղար

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀՀ ԱԱԾ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՓՈՐՁԱՔՆՆՎՈՂԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

(ազգանունը, հայրանունը, անունը, ծննդյան օրը, ամիսը, տարին)

Ախտորոշում _____

ՀՀ _____

(պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը սահմանող Կառավարության որոշման/ԱԱԾ տնօրենի հրամանի անվանումը)

(քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը)

Հատուկ նշում _____

Կ.Տ.

ՌԲՀ նախագահ _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ նախագահի տեղակալ _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ քարտուղար _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

**Ազգային անվտանգության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձի հաստիքը համալրող թեկնածուի
Ա Ռ Ո Ղ Ջ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

Անուն, հայրանուն, ազգանուն, _____

Ծննդյան օր, ամիս, տարի _____

Ուղեգրող ստորաբաժանում _____

Թերապևտ _____

Վիրաբույժ _____

Նյարդաբան _____

Ակնաբույժ _____

Քիթկոկորդականջաբան _____

Մաշկավեներաբան _____

Վնասվածքաբան _____

Հոգեբույժ _____

Սրտաբան _____

Ստոմատոլոգ _____

Գինեկոլոգ _____
(կանանց համար)

Կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն _____

ԷՍԳ _____

Սոնոգրաֆիա _____

Արյան և մեզի ընդհանուր քննություն _____

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ _____

Կ.Տ. ՌԲՀ նախագահ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ նախագահի տեղակալ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ քարտուղար _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀՀ ԱԱԾ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____

_____ (կոչում, անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին)

Ախտորոշումը _____

«_____» _____ թ. _____ հոդվածի _____ կետի

Զինվորական ծառայության հետ պատճառական կապի որոշման տրամադրման հիմքերը՝

Զինվորական ծառայության հետ պատճառական կապը _____

ՌԲՀ նախագահ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ նախագահի տեղակալ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Բժիշկ-մասնագետ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ քարտուղար _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՀՀ ԱԱԾ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

(ՓՈՐՁԱՔՆՆՎՈՂԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ)

_____ (անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին)

ՀՀ _____
(պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը սահմանող Կառավարության որոշման/ԱԱԾ տնօրենի հրամանի անվանումը)

_____ (քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը)

Հատուկ նշում _____

Կ.Տ. ՌԲՀ նախագահ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ նախագահի տեղակալ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՌԲՀ քարտուղար _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)